

**ԱԳԱՐԱՆԳԵՂՈՍԻ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»
ԵՎ ՀՈՒՆԱ-ՀՈՒՄԵԱԿԱՆ ՎԵՊԸ***

ՀՀ ԿԱՍ. արտասահմանյան անդամ ԺԱՆ-ՊԻԵՐ ՄԱՀԵ (Փարիզ)

Կորյունի «Վարք Մաշտոցի» (443 թ.) համեմատությամբ Ազաթանգեղոսի «Հայոց պատմությունը» (451 թ.) կարծես թե մեծ առաջադիմություն է հանդիսանում պատմադրական ժանրի զարգացման տեսակետից: Առաջին երկը, կենտրոնանալով մեկ անձի վարքի վրա, կողմնակիորեն է անդրադառնում այն ժամանակվա պատմությանը, իսկ երկրորդը, կոթողային որմնանկարի պես, ողկելով է ոչ միայն երկու հերոսի՝ Տրդատի և Սուրբ Գրիգորի հանդիպումը, այլև ամբողջ Հայաստանում տեղի ունեցած մի իսկական մշակութային հեղափոխությունը: Հեթանոսությունը անկում է ապրում, Հայաստանը հարում է հասաշխարհային եկեղեցուն: Գրիգոր խուսափորիչը եպիսկոպոսական ձևադրություն է ընդունում Կեսարիայում, Տրդատ թագավորը տեսակցում է Կոստանդին կայսեր հետ, Սուրբ Արիստակեսը մասնակցում է նիկիական առաջին տիեզերական ժողովին:

Նկատի առնելով երկի ձևն ու բովանդակությունը, կարելի է համարել, թե հեղինակը, հաղթահարելով վարքագրական ժանրի սեղ սահմանները, հասել է զուտ պատմադրության մակարդակին և ավելի շատ հետաքրքրվել է ազգերով քան թե անհատներով:

Սակայն երկերի բովանդակության քննադատական վերլուծությունը հեղաշրջում է մեր առաջին տպավորությունը: Կորյունի պատմական տվյալները սովորաբար ճիշտ են լինում: Ազաթանգեղոսի պատմածի իրադարձություններն ընդհանրապես, ակնհայտ առասպելական և աներևակայելի են: Ինչպես՝ սկսած Սուրբ Գրիգորը ահալոր տանջանքներին դիմադրել 25 օրվա ընթացքում: Ինչպես՝ կարող է 13 տարի ապրել թունավոր սողուններով լցված խոր վիրապում և այնպիսից ելած, իր վարադաջած դահիճին նորից մարդացնել:

Բայց ժամանակակից գիտական հետադոտություններն ապացուցել են, որ Ազաթանգեղոսի «Հայոց պատմությունը» (ԱԶ) ավելի հին աղբյուրի՝ Սուրբ Գրիգորի վարքի (Վ) վերամշակումն է: Այդ վարքի կորցված հայերեն բնագիրը որոշ չափով հայտնի է մեզ հունարեն (Վg) կամ արաբերեն (Վa) թարգմանություններով: Նթև այդ թարգմանությունները համեմատենք Ազաթանգեղոսի պատմության հետ, ապա կտեսնենք, որ վերջինիս իմբագրումը հանդիցրել է ստույգ պատմական տվյալների աղավաղմանը, կամ անհետացմանը, ի նպաստ բնագրին անհարիր ավելացումների: Օրինակ, Գրիգոր խուսափորիչի պատմության մեջ մտցվում են Մաշտոցի վարքից քաղված ամբողջական հատվածներ և իրական դեպքերին խառնվում են բոլորովին այլազան տարրեր, ինչպիսին են Բանահյուսական նյութերը Տրդատի մասին:

Պատմության այդ թերացումը, ճշգրիտ և իրատես տեղեկությունների հանդեպ այդ արհամարհանքը չի կարելի համարել սգեստ գրողի գործունեության պատահական արգասիք: Ընդհանրապես, պարզ է, որ Ազաթանգեղոսը

* Զեկուցում կարդացված «Հայաստան-Ֆրանսիա» ընկերության 1996 թ. սեպտեմբերի 17-18-ին կայացած, հայ-ֆրանսիական պատմամշակութային կապերին նվիրված գիտական նստաշրջանում:

ամբողջությամբ է տիրապետում թե՛ մտքին և թե՛ ոճին: Սակայն եթե ուզենք ըմբռնել իր ստեղծագործության իսկական բնույթը, կարևոր չէ առաջին հերթին ստույգել կամ քննադատել պատմական տվյալները, նախ և առաջ պետք է սահմանել գրական ժանրը:

Այս կապակցությամբ թույլ տվեք առաջարկել մի շատ համարձակ բան. գրեթե մի սրբապղծություն, որի համար կանխապես խնդրում եմ ձեր ներողամտությունը: Մոռանանք առաջիկա 20 ընթացիկ «Հայոց պատմության» վերնագրի պատմագրական հավակնությունները և մեր աչքերը սևեռենք բոլորովին հակառակ ուղղության՝ հունա-լատինական վեպերի վրա: Բնապետ և վերջիններս լուրջ գեղարվեստական ստեղծագործություններ են, բայց պետք է խոստովանել, որ շատ նմանություններ ունեն Ազաթանգեղոսի երկի հետ:

Թերևս լավ է մոփոփել այստեղ հին վեպերի հռչակավոր մասնագետի՝ ամերիկացի Բ. Ն. Պերրիի տեսությունները: Ըստ այդմ հին վեպը խզման կամ բեկման գրական ժանր է, որը ծաղկում է գլխավորապես մեր թվականությունից առաջ II դարից մինչև քրիստոնեական III դարը, երբ քաղաք-պետություններն անհետանում, ձուլվում են հելլենիստական և հռոմեական աշխարհի բազմազգ կայսրությունների կազմում:

Ազաթանգեղոսը, ինչ խոսք, շատ ավելի ուշ ժամանակաշրջանի հեղինակ է: Իր պատմած դեպքերը զետեղվում են 226-ի և 325-ի միջև, իսկ բնագիրը հորինվել է հավանաբար մագդեղական հալածանքների օրոք, 451 թ. ապրիստամբուլյան ընթացքում: Բայց այդ երկու ժամանակաշրջանները բնորոշվում են ծանր ճգնաժամով և ողբերգական փոփոխություններով:

Սասանյանները հաստատում և ընդարձակում են իրենց պետությունը, Հռոմեական կայսրությունը, տկարանալով, մատնվում է անիշխանության III դարի կեսերից: IV դարում կայունացած արևելահռոմեական կայսրությունը, այնուամենայնիվ, ի վիճակի չէ իր հայ դաշնակցին՝ ակտիվորեն սլաշտպանելու և ստիպված ընդունում է 387 թ. բաժանումը: Հայաստանի արևելյան մեծագույն հատվածը, ընկնելով Սասանյանների գերիշխանության ներքո, պիտի դիմադրեր պարսիկների կրոնամուլ ճնշումներին:

Խոռվահույզ այսպիսի ժամանակներում անհատը կարծես թե կույր և անողորմ ճակատագրի խաղալիք է դառնում: Հին աշխարհը, իր բոլոր ավանդույթներով, լիովին արժեքազրկված է: Մարդու ո՛չ ուժը և ո՛չ բանականությունը չեն կարող բախտի որոգայթները հաղթահարել: Միայն մեկ ապավեն է մնում, այն էլ գերաշխարհային, թեկուզ բնադանցական: Անհրաժեշտ էր կամ նախնյաց պաշտամունքը, հայրենի աստվածներին վերաիմաստավորել, խորհրդանշորեն մեկնաբանել կամ էլ նրանցից հրաժարվել և համաշխարհային փրկության ինչ-որ կրոն ընդունել: Միայն ամենակալ նախախնամությունը կարող է հաղթել չար ճակատագրի ուժը և կայունությունը վերահաստատել:

Այդ բոլորը հեշտ է գտնել Ազաթանգեղոսի պատմածում: Ո՞ր ճակատագիրը ավելի քմայքոտ է քան Տրդատինն ու Գրիգորին: Չէ՞ որ երկուսը մանկուց որբ են մնացել, ամբողջ գերդաստանի կոտորվելու հետևանքով: Երկուսը հայրենիքից հեռու, Հռոմեական կայսրության մեջ են սնվել մեծացել: Սակայն երկուսի դաստիարակությունը հիմնովին տարբեր է եղել: Ընդունելով իրարից անհաշտ արժեքներ և սկզբունքներ, երկուսն էլ, անհավատալի արկածներից հետո, սլետք է ոչ միայն հայրենիք վերադառնան, այլև իրար ճանաչեն և բոլորովին բարեփոխեն այն խարխուլ աշխարհը, որում ծնվել են: Մյուս կողմից ի՞նչ կա ավելի զարմանալի, եթե ոչ ազնվածին այն հռոմեացի կույսերը, որոնք կամավերապես լքում են իրենց տիեզերակալ հայրենի քաղաքը և նահատակվում են աշխարհիս ծայրին, «բարբարոսական» ժողովրդի թագավորի ձեռքով: Բայց այդ բոլոր դեպքերի թաքուն պատճառն է Քրիստոսի քարոզած նոր հավատը, ամեն ինչ կատարվում է արարիչ Աստծու կամ-

¹ B. E. Perry. The Ancient Romances, Berkeley and Los Angeles, 1967.

յով, որի զորավոր ձեռքը փշրում է կուռքերը, խափանում է անօրենների ձեռնարկումներն ու բարերացնում, փառավորում է իր ծառաներին:

Կաղափարախոսական քեկում արտա՝այտելով, վիպական ժանրը պայ-
թեցնում է զրական սկզբունքները, մնացած ժանրերին հատուկ բոլոր ձեա-
կան կանոնները: Այսպիսով դառնում է շափազանց սինկրետիկ, համաձուլե-
լով ամեն տեսակ այլազան տարրեր: Ազաթանգեղոսը զրանից չի շեղվում:
Քաղում է վարքադրական, դյուցազններգական և պատմագրական աղբյուրնե-
րից: Երա երկը բովանդակում է Լուսավորչի թե՛ մեկնողական և թե՛ քարոզ-
չական բնույթ ունեցող վարդապետությունը: Պարունակում է նաև ներբող-
սեր, տեսիլք, հայտնություններ:

Հեղինակը ճարտար հմտությամբ է օգտվում այդ բազմազանությունից:
Օրինակ, առաջին գլխում հեթանոսական Հայաստանի յոթ տաճարներին
ձոնված հանդիսավոր նվիրատվությունների շքեղ դրվագը հակադրվում է
կույր և խուլ կուռքերի անհեթեթությունը ծաղրող Լուսավորչի բուն և կրքու-
հորդորներին: Տոնակատարությունը խանգարելով, թագավորի մոլորության
վրա ծիծաղելով, այսպեսլով քրմերի և ժողովրդի սնոտի հավատալիքները,
Սուրբ Գրիգորը կանխագուշակում է հեթանոսության անկումը, շաստվածնե-
րի տաճարների կործանումը՝ իրադարձություններ, նկարագրված «Հայոց
պատմության» երրորդ մասում: Եմանապես Տրդատի քաջագործությունները
հակադրվում են թե՛ նահատակ Գրիգորի համբերատարությանը, թե՛ Արշա-
կունի արքայի ամոթալի պարտությանը Հոփսիմե կույսից:

Սովորաբար երևակայական բովանդակությամբ ստեղծագործություննե-
րը, օրինակ՝ Լպոսը կամ ողբերգությունը, շափածո են, և ընդհակառակը, ար-
ձակ հորինված վեսյը կարծես թե մրցակցում է իրական պատմության հետ:
Սակայն հին հեղինակները դատորոշում են այդ երկուսը ռճական կամ հոե-
տորական հատկանիշներով: Օրինակ՝ վեսյը կամ առակը շատ հաճախ գրը-
վում են անուղղակի խոսքով, որպեսզի հեղինակը իր պատասխանատվությու-
նը փոխանցի ինչ-որ ականատեսի, ուրիշի վրա բարդի հորինված պատմը-
վածքի «մեղքը»: Աշխատում են անշան, անհայտ մարդկանց մասին պատմել
կամ էլ, եթե հուշակավոր հերոսներ հիշատակվեն, նրանց կյանքից մշուշա-
պատ մնացած կետերը բացահայտել, օրինակ՝ իր մանկությունն ու առաջին
սխրագործությունները:

Վիպագրության այդ բնահանուր կանոնները շեն կարող հավասարապես
արտացոլվել Ազաթանգեղոսի Պատմության մեջ: Զէ՛ որ Գրիգոր, Տրդատ,
Հոփսիմե, Կալանե, Կոստանդին կայսր պատմական դեմքեր են և չի կարելի
զրանց կյանքի ամենա՝այտնի դեպքերը թաքցնել: Սակայն հեղինակը ձգտում
է նաև այդ ականավոր անձերի վարքից որոշ անհայտ մնացած հանգամանք-
ներ երևան հանել, օրինակ, նրանց մանկության կամ երիտասարդության
փաստերից: Պատմում է նույնիսկ իր հերոսների նախնիների մասին, հիշա-
տակելով ոչ միայն Տրդատի հորը՝ խոսքով թագավորին, այլև Գրիգորի՝ Անակ
Պարթևին:

Բացի այդ, մեր ժամանակագրության հայ հեղինակը քողարկվում է իբր
թե Տրդատ արքայի հույն դիվանապետի՝ Ազաթանգեղոսի դիմակով: Իրակա-
նում այդ անունով մարդ Տրդատի շրջապատում չկար և իբր թե հունարենից
թարգմանված գիրքը ուղղակի հայերեն է դրվել:

Պատմական դեպքերը շրջանցելով կամ ամենահայտնի ճշմարտություն-
ներին շհակասելով, վիպագիրները սովորաբար հանգամանալից կերպով հա-
ղորդում են դեպքերի վայրերին վերաբերող տեղեկություններ, պատմում են
ժողովրդական առասպելների մասին: Օրինակ, Ազաթանգեղոսը ճշգրիտ գիտի,
թե որտեղ է սպանվել զավաճան Անակ Պարթևը՝ Տափերական կամրջի մո-
տակայքում: Գիտի նաև թե որտեղ (Երեղա գյուղից ոչ հեռու, Գայլ գետի
ափին) Գրիգորը Տրդատի հետ վիճեց առաջին անգամ: Ճշգրիտ է տեղավո-
րում այն հնձանը, որի մոտ ապրել են Սուրբ Հոփսիմեմեն և քառասուն կույ-
սերը: Ճանաչում է այն ավանը, որտեղ արքան Լուսավորչին սպասեց Կեսա-

ընդհանուր ներառարձի ժամանակ: Մեջ է բերում երիտասարդ արքայի ուժը փառաբանող ժողովրդական երգերը: Նկարագրում է հեթանոսական Հայաստանի զլխավոր բազիլենները և բնութագրում աստվածներին՝ Վահագն Վիշապաբաղին, Բարշամ Սպիտակափառին, Վահագնի Սենյակ Աստղիկին և Որմիղդի դպիր Տիրին:

Սակայն առանց սիրո ոչ մի վեպ չի կարող լինել, ոչ էլ սիրեկան առանց նախանձող ծերունու և ոչ էլ սիրվող գեղունի՝ առանց միջնորդ պառավի: Այնպես չկարծենք, թե կատակերգական այդ դեմքերը սկզբունքորեն բացառված են Ազգայնագետի երկում: Պարզ է, որ Հոփսիմեի կուսությունը պատկանում է Քրիստոսին, այլ ոչ որևէ հողածին տղամարդու: Ուշագրավ է, որ սուրբ վկայունհին բոլորին է մերժում՝ անգամ արքային կամ կայսրին:

Նախանձող վավաշոտ ծերունին Դիոկղետիանոս կայսրն է: Հարսնատես անելը նա ժամանակի կորուստ է համարում. տիկնանց ընտրում է ավելի արդյունավետ կերպով՝ նկարագրող ալբոմից: Այդ նպատակով իր վարձատրած նկարիչները անընդմեջ կտրում անցնում են Հռոմեական աշխարհի բոլոր նահանգները, կուսանոցների դռներն անգամ անամոթաբար քանդում, բռնի մտնելու համար: Բայց անվախ կուսակրոնները խաբելով ոստիկանությունը փախչում են Հայաստան:

Թեև սիրակարոտը Տրդատ թագավորն է, բայց նա չի արժանանում գեղունու ոչ մի նայվածքին: Միջնորդ պառավ է գտնում ապստամբ գեղունուն համոզելու համար: Շատ իզուր: Գայանեն իբր թե ստանձնում է միջնորդել, սակայն իրականում հանուն ուխտի շահերի: Պառավը կուսակրոնին տանում է մինչև արքունի սենյակի շեմը, բայց այնտեղ հասնելուն պես իր մայրենի լեզվով հնազանդության փոխարեն դիմադրություն է քարոզում: Սենյակից ներս Տրդատը, հրաժարվելով Հոփսիմեին համոզելուց, որոշել է նրան ուժով տիրել: Բայց Սուրբ հոգին այնպիսի ուժ է ներշնչում թշվառ կույսին, որ նախկին օլիմպիական մրցանակակիր զոռող արքան պարտություն է մատնվում թույլ աղքատ կողմից:

Այդ դրվագները նպատակ ունեն ավելի հստակորեն ընդգծելու վեպի խորհրդավոր նվիրական ավարտը: Հռոմեական վիսպարի՝ Ապուլեոսի Լուկիոս հերոսի պես, Տրդատը երկու անգամ է փոխակերպվում. առաջին փոփոխությունը նսեմացնում է իրեն՝ դարձնելով անբան անասուն, իսկ երկրորդը՝ վերստին մարդացնում, աստվածային նվիրում խոստանալով:

Երկու հեղինակները նկարագրում են այդ փոխակերպությունները իրապաշտ մանրամասներով: Լուկիոսի մարմինը ծածկվում է խիտ մաղերով, մաշկը դառնում է կաշի, ձեռքերը վերածվում սմբակների, դեմքը տձևանում է խոզուր ունչքով և երկար ականջներով (Met., III, 24, 2—4), նմանապես և Տրդատի լանջերը ծածկվում է խիտ խոզամազով, ձեռքերի և ոտքերի ծայրերին աճում են այնպիսի եղունգներ, ինչպիսին ունեն հողը փորող և արմատ ուտող խոզերը, երեսին ավելանում է եղեգնաբնակ վարաղի քիթ (Aa, § 727, 728): Երկու ստեղծագործությունների հերոսների վերստին մարդանալու ժամանակ թվարկվում են կատարվող հակառակ բոլոր փոխակերպությունները (Met., XI, 13, 3—4; Aa, § 773):

Ուշագրավ է, որ երկու փոխակերպությունների միջև ընկած ժամանակաընթացքում տեղի է ունենում հերոսների մտավոր և բարոյական զարգացումը, որը երկու գրողների կողմից գրեթե նույնակերպ է բացատրվում: Անձնատուր լինելով ստրկուհի Ֆոտիսի հետ պիղծ ցանկություններին, Լուկիոսը դառնում է էշ (Met., XI, 15, 1): Նմանապես Տրդատը պատժվում է իր անասնաբարո վարքի համար, դառնալով վարազ: Մինչդեռ էշը կերակրվում է գարիով և ուրախանում գեղեցիկ զամբիկներին սիրելուց, արքայազուն վարազը իր նմանների հետ միասին խաղում է ճահճներում: Սակայն երկու հերոսները զղջում են և աստիճանաբար զղաստանում են մինչև մարդկային կերպարանք վերագտնելը: Այդ վերամարդացումը ըմբռնվում է Լուկիոսի կողմից որպես վերածնունդ (renatus, Met., 11, 24, 3): Նմանապես Տրդատի

մարմինը դառնում է մեղկ ու փափուկ՝ նորածին երեխայի մաշկի պես (Առ, § 773), Հեթանոսական քրմերի կամ Հուսավորչի հրամաններին հնազանդվելու պայմանով այդ վերածնունդը վերջանում է մկրտությամբ կամ Իսիական զաղտնածխություններին նվիրմամբ:

* * *

Վերոհիշյալ հատկանիշները բավական են ապացուցելու համար, որ սերտ առնչություններ կան Աղաթանգեղոսի երկի և հունա-հռոմեական վեպերի միջև: Բայց քիչ է այդ նկատելի. պետք է նաև բացատրել, թե ինչպես և ինչու են զոյաղել այդպիսի նմանությունները: Պարզ է, որ «Հայոց պատմության» հեղինակը նպատակ ուներ դրելու ոչ թե վեպ, այլ պատմություն: Սակայն հարցը նրանում է, թե ինչպե՞ս սահմանել պատմական ժանրը և ինչու՞ իր ընդունած շրջանակը այնքան տեղ է թողել վիպական տարրերի համար:

Աստվածաշնչի թարգմանության մեջ հունարեն *historia* բառին համապատասխանում է պատմելի բայից առաջացած պատմություն զոյական անունը: Պատմելի ստուգաբանությունը յրիվ պարզ չէ: Ոմանք համեմատում են այն «համարել» նշանակող պարսկերեն բառի հետ: Ոմանք էլ մերժում են այդ բացատրությունը: Համեմատյալ դեպս պետք է նշել, որ Կորյուն վարդապետի կարծիքով Հեղամատուանը՝ «Մովսիսյան պատմություն»-ն է, այսինքն Մովսեսի կողմից հորինված պատմադրական երկ: Ինքն էլ՝ Կորյունը, մտադիր է դրել իր ուսուցչի՝ Մեսրոպ Մաշտոցի կյանքի և մահվան պատմությունը:

Բայց «Վարդ Մաշտոցի» առաջարկում Կորյունը զոյաց է տալիս, թե այդպիսի պատմությունն այլ բան չէ, եթե ոչ «նախալնների զործների շարունակությունը: Ահա այստեղ պետք է որոնել, թե ի՞նչ կապ կա Աղաթանգեղոսի և հունա-հռոմեական վեպերի միջև: Բացառված չէ, որ հալ հեղինակը կարողացել է հույն դասական պատմիչների երկերը: Թեպետեմ սխեմատիկ ժամանակագրությունը այն ժամանակ արդեն թարգմանված էր, Աղաթանգեղոսի կողմից պատմադրական ժանրի բմբռնումը պիտի հիմնվեր զխափորապես Աստվածաշնչի վավերական կամ անվավեր զրթերի վրա:

Վերջիններիս թվում մեծ տեղ է զբաղում առաքյալների անվավեր զործների ժողովածուն: Հայտնի է, թե ի՞նչ զժվարությամբ եկեղեցու իշխանությունները կարողացել են այդ զրություններն արդելի և պահպանել միայն կանոնական զործները: Եթե Գրիգոր Հուսավորչի առաքյալ է, բնական չէ՞ արդյոք, որ նրա վարքը և սուրբ նահատակ Հոսիսիմի վկայաբանությունը պատմվեն Սուրբ Թադևոսի և Սուրբ Սանդուխտի կամ էլ Սուրբ Պողոսի և Սուրբ Թեկղի զործների օրինակով:

Հիշենք, որ «Թեկղի զործը»-ը, ինչպես նաև Թեկղի վարժն ու հուշմանքը թարգմանվել են V դարում և արձագանք են գտել հայոց ուրիշ պատմիչի՝ Փավստոս Բուզանդի մոտ: Այդ հարցին հանդամանորեն է անդրադարձել վերջերս Թեկղին վերաբերող սրբախոսական հայերեն բնագրերի հրատարակիչ Վալենտինա Կարգոլարին²: Վերջինս կոահում է, որ Թեկղի ուժեղ բնավորության մեջ հալերը հանաչել են Անահիտ զիցուհու որոշ զիմաղձեր: Ավելագուհներ մեր կողմից, որ Թեկղի այն Հոսիսիմին կարողանում է պաշտպանել իր կուսությունը: Ինչպես որ Թեկղը հաղթում է Ալեքսանդր անունով մի ուժեղ

² Calzolari (V.), La leggenda di Santa Fecla nella letteratura armena antica. Fests (Universita Cattolica del «Sacro Croce» di Milano), Milano, 1995. Flick-Michel (N.), Art et mystique dans les Métamorphoses d'Apulée, Paris, 1991. Ն. Ա. Դ. Ն. ի., «La metamorphose Initiaque», in L'initiation, Montreiller, 1992, p. 271—292. Garritte (Q.), Documents pour l'étude du livre d'Agathange (Studi e Testi, 127), Vatican, 1946. Mahé (J.-P.), Un dieu guerrier à la campagne, l'exemple du Vahagn

երիտասարդի (Գործք § 26) կամ մի կուսակալի քրմի (հրաչք § 3), նույնպես և Հռիփսիմեն հաղթում է Տրդատին: Թեկղի տոփոտ երկրպագուններից մեկը վարձում է մի նկարիչ, կույսի դիմանկարը պատկերելու համար, նմանապես Դիոկղեստիանոսի արվեստագետները նկարում են Հռիփսիմենին: Բայց մինչդեռ կայսրը, նկարը տեսնելիս, ավելի շատ է տոփում, Թեկղի երկրպագուն ընդհակառակը, ալնքան է հուզվում սուրբ կույսի հոգևոր գեղեցկությունից, որ զգաստանում է և բարեպաշտ դառնում:

Ուստի և կուսհում եմ, որ Ազաթանգեղոսը նպատակ ունենալով Գրիգորի վաբքը (V) վերածել կոթողային պատմագրական դրվագի, ընդունեց որպես պատմագրական ժանրի օրինակ այն պատմությունները, որոնք իր կարծիքով ամենից ճշմարտապատում էին, այսինքն Առաքյալների անվավեր գործերը, որոնցում իրոք շատ հաճախ են հանդիպում հունա-հռոմեական վեպերից քաղված հրաշագան արկածներ: Այս ենթադրությունս դեռևս կարիք ունի խստագույն ստուգման՝ ավելի ընդարձակ նյութերի հիման վրա: Այնուամենայնիվ, կարծում եմ, որ զրականագիտական նկատառումներս արդեն բավական հատկանշական են դրա որոշ հավանականությունը պնդելու համար:

«ИСТОРИЯ АРМЕНИИ» АГАФАНГЕЛА И ГРЕКО-РИМСКИЙ РОМАН

Иностранный член НАН РА ЖАН-ПЬЕР МАЭ (Париж)

Р е з ю м е

В жизнеописании Григора Просветителя и истории мученичества Рипсиме в труде «История Армении» Агафангела присутствуют элементы фабулы, свойственные греко-римскому роману. Общности в развитии сюжетов в столь несхожих по жанру произведениях обязаны своим возникновением либо непосредственному знакомству автора «Истории Армении» с образцами греко-римского романа, либо влиянию неканонической литературы (например, апокрифа «Деяния Павла и Феклы»),

armenien. Comptes rendus des seances de l'Academie des Inscriptions et Belles Lettres, Paris, 1944, p. 779—801. Ն ու յ ն ի, Quatre nouvelles publications (1990—1994) sur Korlwn.—REArm. 25 (1994—1995), p. 417—423. Ա. Տ ե ղ - Ղ ե ո ն դ յ ա ն, Ազաթանգեղոսի արաբական խմբագրության նորահայտ ամբողջական բնագիրը, ՊԲԶ, 1973, № 1, էջ 209—236; Thompson (R. W.), The Formation of the Armenian Literary Tradition.—In: N. Garsoian etc., East of Byzantium, Washington, 1980, p. 135—180. Winkler (G.), Our Present Knowledge of the History of Agat'angelos and its Oriental Versions.—REArm 11 (1980), p. 125—141.